

## **Պատասխան.**

Հաշմանդամություն ունեցող անձանց գույքի /սայլակ, քայլակ և այլն/ տրամադրման ընթացակարգը իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն կարգի և հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրին (ՎԱԾ) համապատասխան:

Գույք ձեռք են բերվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (նախարարություն) «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ից (հասցեն՝ Երևան-5, Թբիլիսյան խճուղի 3/14)՝ նախարարության գործուղած համապատասխան մասնագետի (մեր մարզում լիազորված անձ է «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս.Մաղաքյանը) կողմից:

Հաշմանդամություն ունեցող անձի համար գույք ստանալու համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ պատճեններով.

- անձնագիրը,
- հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական ապահովության քարտը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի բնօրինակը,
- հաշմանդամության տեղեկանքը,
- ՎԱԾ-ը, եթե սայլակն ստանալու համար դիմում է առաջին անգամ:

ՀՀ Լոռու մարզում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց գույքի տրամադրման նախապատրաստական աշխատանքը իրականացվում է համակարգված ձևով՝ մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի կողմից /բաժնի պետ Վ.Ջաղինյան, հեռ.՝ 0322 2-33-99, 055/091 98-14-06/: